

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Մայիսի 8-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Ամենայն Հայոց Հայրապետը Երևանում, Գերագույն սովետի դահլիճում այցելեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանին և նրան շնորհավորեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրվելու բայրեբաստիկ առիթով:

Վեհափառ Հայրապետի և Հայաստանի Հանրապետության նախագահի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց, ջերմ մթնոլորտում:

Պաշտոնական այս այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և գավազանակիր հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոլապալյանը:

Ընդունելությանը ներկա էին նաև Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Վ. Նալբանդյանը, նախագահության քարտուղար Ա. Գալստյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

ԴԻՎԱՆ ՄԱՑՐ ԱԹՈՌԻ